De nos jours, la musique populaire arménienne fait encore appel à des instruments de musique assez largement répandus dans le monde oriental.

Dans le présent album, le chœur Sainte-Croix a enregistré une série de chants qui appartiennent à la branche de la musique liturgique. Cette discipline relève presque exclusivement de la musique rustique populaire, le contexte religieux étant venu s'adapter sur la mélodie: moyen très sûr pour amener le peuple à adopter la religion chrétienne, imposée d'un jour à l'autre, par le canal de ces mêmes chants païens célébrés dans les temples des dieux.

Avec Narek Kazazyan, nous avons enregistré pour «l'âme arménienne» un chant de la messe de Maker Yekmalyan,

antérieur à celle de Komitas. La mélodie y est accompagnée par une note pédale qui se nomme en arménien le « dam » et qui est la fondamentale commune à la musique populaire et sacrée. La particularité de la messe de Komitas est qu'elle devient la première messe polyphonique arménienne écrite pour l'église, mais également pour être chantée en concert. De ce fait, la beauté harmonique et musicale prend en quelque sorte le dessus sur l'intimité de la confession, ce qui à l'époque provoque un vrai séisme.

«Plus je pousse ma réflexion dans les profondeurs de ce vaste océan de la musique, plus je suis convaincu que nos mélodies populaires et religieuses, majestueuses et immortelles, qui depuis longtemps fraternisent, deviendront, même pour les étrangers, une source de recherches car leurs racines remontent très loin dans le temps»

Komitas correspondance, 1897.

Հայ երաժշտությունը դարերի ընթացքում Աստղիկ Սիրանույանի կողմից

Հայ ժողովուրդն իր սփ քանի հազարամյա պատմության ընթացքում կերտել է ուրույն ու հարուստ մշակույթ. լեզուն, այբուբենը, ճարտարապետական կոթողները, արվեստն ու երաժշտությունը առավելապես վկայում են Հայաստանի հինավուրց և հախուռն պատմության տարբեր փուլերի մասին:

Այսօր մեզ հասած երաժշտական մշակույթը տոգորված է հոգևոր շնչով ու հակադրություններով, և ինչպես արվեստի բոլոր բնագավառները, այն նույնպես կրել է հայ ազգի արյունոտ պատմության ազդեցությունը:

Հեթանոսական ժամանակներում այն արդեն ուներ ինքնատիպ երաժշտական մշակույթ:

Հայկական ժողովրդական երաժշտությանը հատուկ են երեք հիմնական ժանրեր՝ գեղջկական երգ, քաղաքային երաժշտություն, հեղինակային (բարդ) երգեր: Թեև հոգևոր երաժշտությունը շատ հին է, համարվում է, որ այն հաջորդել է ժողովրդականին, որից էլ կարող էր սերել:

Հայկական մշակույթի էությունը, յուրահատկությունները, որոնցով այն տարբերվում է մյուսներից, մասնավորապես հարևան երկրների մշակույթից, կարող են սահմանվել հետևյալ գործոններով.

1. Լեզուն, որը ծառայում է որպես մտավոր և հոգեկան գործընթացների միջոց, և որն, այլ զանազան տարրերի հետ միասին, որոշիչ դեր է խաղում հայ մտքի կառուցվածքի, զարգացման և փոխանցման գործում:
2. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որը մշտապես և շարունակաբար կարևոր դերակատարություն է ունեցել հայ մշակույթի ամրապնդման և տարածման գործում, և առանց որի անհնար կլինեք ընթանել վերջինիս սոցիոլոգիական, մտավոր և նյութական տարրերը:
3. Ավանդույթները, բարբերը, սովորույթները, որոնք սահմանում են հայկական ողջ մշակութային ժառանգության առանձնահատկությունները:

Այսպիսով, հայոց պատմությունն ու երաժշտությունը երկուստեք համակված են այս մշակույթով տոնային համակարգը, երաժշտական ժանրերը, իմպրովիզացիայի, կոմպոզիցիայի և կատարողական տեխնիկաները, անսամբլների կառուցվածքը, ռիթմիկ բանաձևերը, ինչպես նաև երաժշտության անհատական հայեցակարգերը և երաժշտի դերը հասարակության մեջ, միշտ էլ կարևոր դեր են ունեցել այս պատմության բուն կառուցման մեջ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև քաղաքական, սոցիալական, կրոնական և անգամ հեղափոխական շարժումները, որոնք, շնորհիվ Սփյուռքում և աշխարհի չորս ծայրերում հայության ներկայիս սոցիալական դիրքի, կարող են ունենալ զգալի ազդեցություն երաժշտական կյանքի, ինչպես նաև արվեստի մնացած բնագավառների վրա: Անգամ ավանդական երաժշտությունը երբեմն վտանգի տակ է, չնայած Հայաստանում և Սփյուռքում այն պաշտպանելու և երիտասարդ սերունդներին այդ ժառանգությունը փոխանցելու ցանկությունն ու վճռականությունը մեծ է, որպեսզի այն երբևէ մոռացության չմատնվի:

Ավանդական երաժշտության ակունքները գալիս են պատմության հեռավոր

ժամանակներից, և դրա զարգացումը կապված է քաղաքական և մշակութային իրադարձությունների հետ: Կարևոր է նշել, որ, չնայած կրած փոփոխություններին, երաժշտությունը, և հատկապես երգը, մշտապես ուղեկցել է հային՝ անփոխարինելի դեր ունենալով կարևոր հասարակական իրադարձությունների ժամանակ և ինքնության կերտման հարցում:

Հայ երաժշտությունը բաժանված է մի քանի ճյուղերի, որոնցից յուրաքանչյուրը, պահպանելով ընդհանուր ազգային դիմագիծը, ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Ըստ Կոմիտասի. «*Հայ երաժշտությունը համակ ուժ է և կենդանություն, ու իր մեջ կը սնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արքահայրությանց մեջ - կենդանի, - որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, - որքան ուժեղ է իրեն ծնունդ փվող ժողովուրդը»*

Սերելով հեռավոր անցյալից՝ դեռևս Արմենների ժամանակներից, հայկական երաժշտությունը, թեև կրում էր հունական երաժշտության տեսության ազդեցությունը

յուրովի է փոխակերպել տեսրախորդի հնչյունաշարային բաժանումը:

Յուրաքանչյուր տոնայնություն և գամմա ունի հստակ անուն: Այս տեսությունն առաջացել է անմիջապես կիրառման արդյունքում, այդ իսկ պատճառով տարբերվում է հունական երաժշտական տեսությունից և վերջինիս տեսրախորդալ բաժանումներից: Այնուամենայնիվ, այս եղանակների և տոնային համակարգի ուսումնասիրությունը վեր է հանում բյուզանդական երաժշտության հետ բավականին ապշեցուցիչ նմանություն:

Հայկական երաժշտական նոտագրությունը բաղկացած էր երկու համակարգից՝ նևմերական դասական նոտագրություն (այժմ անհետացած) և արևնոյան դասական նոտագրություն:

Հայկական նևմերական համակարգի վերլուծությունն ու վերծանումը գրավել է բազմաթիվ հայ և օտարազգի երաժշտագետների ուշադրությունը, որոնք երկար ուսումնասիրել են այս մոռացված նոտագրությունը: Միայն մեծն Կոմիտասն է հաջողում այս գործում: Ավաղ, նրա երկարամյա աշխատանքն անհետանում է իր ողջամտության հետ միասին 1915 թվականի ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսից հայ

մտավորականների բռնագաղթի ժամանակ, տեսնելով իր հայրենակիցների ջարդը՝ մեծն երաժիշտը խեղագարվում է՝ այդպիսով չհասցնելով գրի առնել իր բացահայտումը, որի մասին հիշատակում էր ընկերներից մեկին ուղղված նամակում:

Ամեն երաժշտության ակունքում երգն է ու պարը: Բոլոր ժողովուրդները երգում են՝ պարելով, պարում՝ երգելով: Պարային երաժշտությունը, երգի մեղեդիները ծնվում են ականա՝ ստեղծագործելու տաղանդ ունեցող անհայտ մարդկանց շուրթերին: Այս մեղեդիները, որոնք միշտ անձնական են, անմիջապես փոխանցվում են հանրային ժառանգությանը: Յուրաքանչյուրն իր փոփոխությունն է բերում մեղեդին, ասես, պատկանում է բոլորին, ծագում է անբոխից:

Պարերգերը երաժշտական պրակտիկայում ներկայացնում են ամենապարզ ձևերը: Ազգագրագետ Մանուկ Աբեղյանը դրանք անվանում է «խաղ», Կոմիտասը դրանց համար փոխառում է «յայլի» անվանումը, իսկ մարդկանց խմբին կոչում է՝ «գյո(վը)նդ»:

Այս պարերի կառուցվածքը պարզ է, դիապազոնը՝ սահմանափակ: Ժողովրդական բոլոր գամմաները հատուկ են նրան: Պարը հավաքական արտահայտում է: Այն ունի

պարզ ձև, հազվադեպ երկանդամ է կամ եռանդամ:

Թվում է, թե պարային երաժշտությունը հազարամյակներ շարունակ կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի երաժշտական գործունեության մեջ: Այդ մասին են վկայում տարբեր ժամանակաշրջաններում հայտնաբերված հնագույն առարկաները:

Մենակատարային երաժշտական գործիքները, ինչպես օրինակ՝ քանոնը, ընդգրկվում են գործիքային հանույթում և երգչախմբում՝ ընդգծելով այս պարերի տաղաչափական և միթմիկ հարստությունը, որը կարող է հասնել անսանձելի, գրեթե անզուսպ տեմպի:

Բոլոր հայկական երաժշտական ձևերը կարելի է դիտարկել որպես որոշ հիմնարար միթմիկ բջիջների զարգացումներ:

Ի սկզբանե, երաժշտությունը հաճախ կապված է եղել պոեզիայի, պարի, շքերթների հետ՝ իր զարգացման ընթացքում բազմաթիվ քնարական ստեղծագործություններից անբաժան լինելով: Ռիթմը հաճախ ընդհանուր է երեք արվեստների համար, և հաճախ վերջինիս գրական կողմն է էական մեզ համար՝ արժեքավոր պատկերացումներ տալով երաժշտական միթմի մասին:

Հայաստանում գործիքներն օգտագործվում են բազմաթիվ հովվերգական կամ պատարագային առիթներով, ժողովրդական տոնախմբությունների ժամանակ: Գործիքային անսամբլը կատարում է բազմաթիվ ժողովրդական մեղեդիներ, հատկապես, երբ դրանք ենթարկվում են ինպրովիզացիաների: Ժողովրդական գործիք նվագողի վիրտուոզությունը գնահատվում է նույնքան, որքան իր ինպրովիզացիոն հմտությունները: Երբ խոսքը գնում է տվյալ մեղեդու կատարման մասին, գործիքավորողը կարող է այն աստիճանի ինպրովիզացիաներ ստողծել, որ արդյունքում դառնա դրա հիմնական հեղինակը: Պարային երգերը հիմնականում կապված են եղել ծեսերի հետ, հատկապես՝ հեթանոսական, որոնք հետագայում հարմարացվել են ժամանակի ավանդույթներին՝ դառնալով քրիստոնեական տոների մաս:

Չնայած իրենց բազմազանությանը՝ գեղջկական երգերն ու պարերը ճշգրիտ պատկերացում են տալիս հայ ազգային երաժշտության մասին:

Ըստ Կոմիտասի՝ այս պարերգերն առաջացել են տոների ժամանակ, երբ աղջիկներն ու աղաները, սիրային զգացմունքներով տոգորված, տարբեր թեմաներով

ինպրովիզացիաներ էին ստեղծում՝ ընկերությանը, կարոտին, գովաբանությանը, գեղեցկությանը, կատակին, բաժանումին, բացակայությանը նվիրված...

Երաժշտական այս բազմազանությունը, վոկալ երաժշտությունը բացի, պահանջում էր նաև գործիքային միջանություն:

Մեր օրերում հայկական ժողովրդական երաժշտությունը շարունակում է օգտագործել արևելյան աշխարհում բավականին տարածված երաժշտական գործիքները:

Այս պլոնում Երևանի Սուրբ Խաչ եկեղեցու երգչախումբը ձայնագրել է պատարագային երաժշտության ճյուղին պատկանող երգերի շարք: Այս ճյուղը գալիս է գրեթե բացառապես ժողովրդական գեղջկական երաժշտությունից, կրոնական համատեքստը հարմարեցվել է մեղեդուն: Սա բավականին անվտանգ միջոց է կարճ ժամանակահատվածում մարդկանց դրդելու ընդունել քրիստոնեությունը, այնպես ինչպես ժամանակին հեթանոսական երգերն էին հնչում աստվածների տաճարներում:

Նարեկ Կազազյանի հետ մենք ձայնագրել ենք «Հայկական հոգու» համար Մակար Եկմալյանի պատարագից մի երգ, որը

նախորդում է Կոմիտասի պատարագին: Մեղեդին ուղեկցվում է երգեհոնի կետով, որը հայերենում կոչվում է «դամ» և որը ժողովրդական և հոգևոր երաժշտության ընդհանուր հիմքն է: Կոմիտասի պատարագի առանձնահատկությունն այն է, որ վերջինս դառնում է եկեղեցու համար գրված առաջին հայկական բազմաձայն պատարագը, բայց նաև, որ այն հնարավոր է երգել համերգին: Արդյունքում, հարմոնիայի և երաժշտական գեղեցկությունն ինչ-որ տեղ գերիշխում է խոստովանանքի մտերմությանը, որն այն ժամանակ իսկական իրարանցում է առաջացնում:

«Քանի խորունկն եմ մրնում երաժշտական ծիծաղածին ծովի մէջ, նոյնքան պնդում է համոզմունքս, թէ՛ մեր է ժողովրդական էն եկեղեցական աննանն ու վեհ եղանակները, որոնք քոյր եղբայր են շնոր վաղուց, ապագայում նոյնպէս օրարների համար ուսումնասիրութեան աղբիւր պէտք է դառնայ. որովհետեւ արմատը շար խորն հնութիւն է տանում հասցնում, մինչեւ Հայի ծագումը, սյնարեղ նորանից անբաժան, ծլում եւ նորսն հետ է մեղ հասնում:

Կոմիտասի նամակագրությունից, 1897 թ.



Reine d'Arménie, Mario Balassi, ca 1640

Armenian music over the centuries

By Astrig Siranossian

In the course of their history of several thousand years, the Armenian people have forged their own rich culture: their language, their alphabet, their architectural monuments, arts and music, bear.

The musical culture that has come down to us is imbued with a spiritual life and contrasts influenced, as in all fields of art, by the blood-soaked history of the Armenians. Armenia already had an original musical culture in pagan times.

There are three main genres of Armenian folk music: peasant songs, urban songs and bard songs. Sacred music, although very old, is considered to be inspired by preexisting popular music. The essence of Armenian culture, the characteristics that differentiate it from others, especially from the culture of neighbouring countries, can be defined by the following factors:

1. Language, which serves as a vehicle for intellectual and psychic processes and which, together with various other

elements, plays a determining role in the structure, development and transmission of Armenian thought.

2. The Armenian Apostolic Christian Church, which has played and continues to play a leading role in the establishment and propagation of Armenian culture, and without which it would be impossible to grasp its sociological, intellectual, and material elements.
3. Traditions, customs and lifestyle that determine the characteristics of the entire Armenian cultural heritage.

Armenian history and music are thus permeated by this culture and vice versa: the tonal system, the musical genres, the techniques of improvisation, composition, performance, the structure of ensembles, rhythmic formulas, as well as individual conceptions of music, and the position of the musician in society, have always played

an important role in the triumph of this history.

However, it is also necessary to consider political, social, religious and revolutionary movements which, due to the current social position of Armenians in the Diaspora and the four corners of the globe, can exert a significant influence on musical life, as in all fields of art. They even threaten traditional music at times, despite a will in Armenia and the Diaspora to protect it and a deep determination to pass on this heritage to the younger generations so that it may never be forgotten.

The origins of this traditional music date back to a distant period in history and its evolution is linked to political and cultural events. It is important to note that despite the fluctuations it has undergone, music - and especially singing - has always closely accompanied the life of Armenians and played an irreplaceable role in most social events and the construction of their identity.

Armenian music is divided into several branches, each of which, while retaining

its general national character, has its own specificity.

According to Komitas: “Armenian music is all strength, all vitality; it nourishes within itself the very philosophy, the very genius of its people; for music is the clearest, most authentic and liveliest mirror of all the expressions of the people: as lively as the people are, as strong as the people who gave birth to it are.”

Armenian music, which has its roots in the distant past of the Armenians, has been influenced by Greek musical theory and has created a particular approach to tetra chordal division.

Each mode and scale have a distinct name. This theory has its sources directly in practice and for this reason it differs from Greek musical theory and its tetra chordal divisions. Nevertheless, the study of these modes and the tonal system reveals a rather striking similarity with Byzantine music. Armenian musical notation consisted of two systems:

classical neumatic notation (now extinct) and western classical notation.

The analysis and deciphering of the Armenian neumatic system has attracted the attention of many musicologists, Armenians and non-Armenians alike, who have long studied this overlooked notation. Only the great Komitas succeeded. However, his long-term research effort disappeared together with his mental health because the great musician, during the deportation of the Armenian intellectuals from Constantinople on 24 April 1915, reached a state of insanity at the sight of the massacre of his compatriots, and thus did not have the time to write down his discovery, which he mentioned in a letter addressed to one of his friends.

At the origin of all music, we find singing and dancing. All peoples sing while dancing, dance while singing. Dance music and song tunes are born spontaneously on the lips of anonymous people marked by the gift of creativity. These tunes, which always have a personal

origin, are immediately added to the community's heritage. Each person adds his or her own variations, the tune seems to belong to everyone, to emanate from the crowd.

The danced songs represent the simplest forms of musical practice. The ethnologist Manouk Abeghian calls them “Khag”, Komitas calls them “Yayli” and the people “Guiont”.

The structure of these dances is simple. Their pitch is limited. All the popular scales are associated with it. Dance is a collective expression. It is simple in form, rarely in duos or trios.

Dance music seems to have played a major role in the musical activity of Armenia for thousands of years. This is substantiated by very ancient objects discovered in different periods.

Solo instruments such as the Qanun are added to the instrumental ensemble and the choir, enhancing the metrical and rhythmic richness of these dances, which can reach a wild, almost unbridled pace.

All Armenian musical forms can be considered as developments of certain fundamental rhythmic cells.

Originally, music was very frequently linked to poetry, dance, procession, and evolution accompanying many sung compositions, the rhythm will often be common to all three arts, whose literary origins most often remain with us; providing us with serious indications as to the musical rhythm.

In Armenia, instruments are used in many pastoral and liturgical circumstances, as well as during popular celebrations. Many folk tunes can be performed by an instrumental ensemble when they lend themselves to improvisation. A player of a folk instrument is valued as much for his or her virtuosity as for his or her improvisational skills: when it comes to interpreting a given tune, the instrumentalist can improvise to the point of becoming the principal creator.

Dance songs are in principle linked to rites, especially pagan ones, which were later adopted into common traditions by substituting Christian festivals.

Despite their diversity, the rustic songs and dances give a very accurate picture of Armenian national music.

According to Komitas, these danced songs originated on the occasion of festivals, where girls and boys, motivated by feelings of love, improvised on different subjects: friendship, nostalgia, accolades, beauty, teasing, separation, absence...

All this music required, in addition to singing, the use of instruments.

Today, Armenian folk music still uses musical instruments that are widely available in the Oriental world.

In the present album, the Holy Cross choir has recorded a series of songs that belong to the branch of liturgical music. This discipline is almost exclusively popular rustic music, the religious context having been adapted to the melody: a very sure way of getting the people to adopt the Christian religion, imposed from one day to the next, through the channel of those same pagan songs celebrated in the temples of the gods.

Together with Narek Kazazyan, we recorded for the “Armenian Souls” a song from the mass of Maker Yekmalyan, which predates that of Komitas. The melody is accompanied by a pedal note called “dam” in Armenian, which is the fundamental note common to popular and sacred music. The particularity of Komitas' mass is that it became the first Armenian polyphonic mass written for the church but also to be sung in concert. As a result, the harmonic and musical

beauty of the mass took precedence over the intimacy of the confession, which at the time provoked a real shock.

“The more I delve into the depths of this vast ocean of music, the more I am convinced that our popular and religious melodies, majestic and immortal, which have been fraternising for a long time, will become, even for foreigners, a source of research because their roots go back a long way.”

Komitas correspondance, 1897.



Nature morte aux instruments arméniens, Meruzhan Khachatryan, XXIème siècle



Dédicace de l'Évangile de Zeyt'un, enluminé par T'oros Roslin, 1256, Matenadaran

La musique d'église arménienne

Par Éric Aloian, Chœur de l'Église de la Sainte Croix d'Erevan

Dans le patrimoine musical chrétien oriental, la musique d'église arménienne, considérée comme l'une des plus anciennes, occupe une place exceptionnelle. Elle est l'une des trois branches de la musique monodique arménienne. Son essor date du I^{er} siècle. Les plus anciens exemples écrits que nous possédons sont datés des IV^e-V^e siècles, époque où l'alphabet arménien a été créé par Mesrop Machtots, ce qui a donné vie à la tradition écrite de l'hymnographie arménienne. Son développement s'est poursuivi pendant la majeure partie du Moyen-Âge jusqu'aux XIV^e-XV^e siècles, sans changement significatif par la suite. L'invention de la notation arménienne (également connue sous le nom de notation de Limondjian), qui est venue remplacer les khazes, est une création notable et a donné le coup d'envoi de la nouvelle ère de l'hymnographie arménienne écrite.

Le *ktsurd* est l'un des genres les plus anciens de musique d'église arménienne (de l'arménien «կցեղ» qui signifie «attacher»), un chant court avec une structure mélodique simple, composé le plus souvent de trois strophes. Il était destiné à être lié à des versets de la Bible, rendant ainsi les citations bibliques plus compréhensibles pour la nation nouvellement christianisée. Ces *ktsurds* étaient les prototypes d'un autre genre bien connu, le *sharakan*. Ce disque contient deux *sharakans* de repentance issus de cette époque et attribués à Mesrop Machtots. Nous avons essayé de présenter ces *sharakans* de manière aussi proche que possible de l'exécution monodique originale, en utilisant des points d'orgue. L'autre *sharakan*, « Apporte-nous ton aide, Seigneur tout-puissant » (de l'arménien «Յօզմուրթիւն մեզ ժամանես») est également consacré au thème de la pénitence. Nous vous présentons un arrangement de ce *sharakan* pour chœur

d'hommes par le fondateur de la musique classique arménienne, le révérend père Komitas.

Ce programme est majoritairement constitué d'arrangements de la Divine Liturgie: pièce maîtresse des rituels de l'Église arménienne, elle résume toute la vie terrestre du Christ et l'idéologie de la Cène biblique. La Divine Liturgie arménienne, comme tous les autres genres de la musique d'église arménienne, a été créée en arménien, en restant aussi proche que possible de l'esprit linguistique et mélodique de la nation arménienne et en apportant ainsi un certain son ethnique. La composante musicale de la liturgie arménienne s'est beaucoup développée au fil du temps, avec l'ajout d'autres genres de la musique d'église arménienne, comme le *tagh*, le *gandz*, le *meghedi*, etc. La structure actuelle de la Divine Liturgie (la version monodique) nous est parvenue grâce aux deux publications de la Divine Liturgie de N. Tashjian (1874, 1878, Vagharshapat).

Le révérend père Komitas a puisé dans ces deux publications les mélodies pour son arrangement de la Divine Liturgie.

Nous vous présentons plusieurs morceaux de celle-ci Komitas, *The Complete Works*, Volume 7, "Liturgy", Erevan, 1997) – « Élu de Dieu », « Procession de Noël », « Louez le Seigneur, ô Jérusalem », « Saint, saint », « Loué soit le Seigneur. Le Christ est sacrifié », « Notre Dieu », « Nous avons été remplis de ta bonté », « Nous te rendons grâce », « Béni soit le nom du Seigneur ». La chanson « Amen. Saint est le Père » vous est présentée à partir de la Liturgie préparée pour les funérailles du catholicos Mkrtich Khrimyan en 1907 (Komitas, *The Complete Works*, Volume 8, Spiritual Music, Yerevan, 1998).

Nous avons apporté un soin tout particulier aux traductions de ces chants: « Abondante est ta compassion » est extrait de « De Profundis – Armenian Sacred Music, Anahit Papayan, Lusine Ghazaryan, Hover Chamber Choir. Vem Recordings, 2005 CD, traductions par

Thomas Samuelian», «Je m'agenouille devant toi» a été traduit par Artsvi Bakhchinyan, «Apporte-nous ton aide, Seigneur tout-puissant» est extrait de «The Way. Armenian Sacred Music. Hover Chamber Choir of Armenia. Vem Recordings, 2005 CD, p.13»,

«Procession de Noël» a été traduit par Eric Aloian, et tous les autres textes de la Divine Liturgie sont tirés de «Divine Liturgy of the Armenian Apostolic Orthodox Church. Traduit par Tiran Abp. Nersoyan, cinquième édition révisée, Londres, 1984».

Հայ եկեղեցական երաժշտություն Նախաբանը՝ Էրիկ Ալոյանի

Արևելաքրիստոնեական երաժշտական ժառանգության մեջ իր կարևոր տեղն ունի հնագույններից մեկը համարվող հայ հոգևոր երաժշտությունը: Այն հայ մոնոդիկ երգաստեղծության երեք ճյուղերից մեկն է: Սկզբնավորվել է Ա դարում, մեզ հասած գրավոր հնագույն նմուշները թվագրվում են Ե դար, երբ Սբ.Մեսրոպ Մաշտոցի կողմից հայկական այբուբենի ստեղծմամբ հիմք դրվեց հայ հիմներգության գրանցման ավանդույթին: Հետագա զարգացումը շարունակվել է մինչև ԺԴ-ԺԵ դարեր, հաջորդող շրջանը լուրջ փոփոխություններով աչքի չի ընկել: Առանձնակի ուշադրության է արժանի հատկապես ԺԹ դարասկզբում եկեղեցական երաժշտության գրառման նոր համակարգի

(Հայկական նոտագրություն) ստեղծումը, որ եկավ փոխարինելու ավանդական խազագրությանը: Սրանով նոր շունչ տրվեց հայ հոգևոր երաժշտության գրավոր պահպանման ավանդույթին:

Հայ հոգևոր երաժշտության հնագույն ժանրերից մեկն է կցուրդը, որ սուրբգրային տեքստերին կցվելու միջոցով վերջիններիս բովանդակությունը առավել պարզ և հասկանալի ներկայացնելու նպատակ էր հետապնդում: Սրանք մեզ հայտնի շարականների նախատիպն էին: Այս ժամանակաշրջանից մեր սկավառակում ներառել ենք Սբ. Մեսրոպ Մաշտոցի անունով մեզ հասած երկու նմուշ Ապաշխարության

կարգից: Գրանք փորձել ենք ներկայացնել հնարավորինս հարազատ մնալով հայ մոնոդիկ հիմնադրության կատարողական սկզբունքներին, մասնավորապես՝ մեղեդին ուղեկցում ենք ընդունված ձայնաառարկաններով՝ դանով: Մյուս նմուշը՝ «Յօգնություն մեզ ժամանեա», ևս նվիրված է ապաշխարության թեմային: Այս շարականը ներկայացնում ենք հայ դասական երաժշտության և հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Տ.Կոմիտաս վարդապետի՝ արական երգչախմբի համար արված բազմաձայն մշակմամբ:

Սկավառակի մեծագույն մասն են կազմում Սր. Պատարագի երգեցողությունների՝ քառաձայն արական երգչախմբի համար Տ.Կոմիտաս վարդապետի կողմից արված մշակումները:

Սր. Պատարագը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գլխավոր ծիսակատարությունն է: Այն իր մեջ ամփոփում է Քրիստոսի երկրային ամբողջ կյանքը և աստվածաշնչյան վերջին ընթրիքի խորհուրդը: Սր. Պատարագի ծեսը, ինչպես և հայ հոգևոր երգաստեղծության մնացած ժանրերը, ստեղծվել է հայերեն լեզվով՝ հիմնվելով հայկական երաժշտաինտոնացիոն մտածողության վրա, ինչն ազգային հնչողություն է հաղորդում հայ եկեղեցական երաժշտությանը: Սր. Պատարագի երաժշտական նյութը դարերի ընթացքում մեծ զարգացում է ապրել, ավելացվել են միջնադարյան հայ հեղինակների մի

շարք ստեղծագործություններ, որոնց թվում մեղեդիներ, սրբասացություններ, տաղեր և այլն: Սր. Պատարագի այժմեական կառուցվածքը (մոնոդիկ տեսքով) մեզ է հասել 1874 և 1878թթ. Ն. Թաշճյանի կողմից հայկական նոտագրությամբ արված գրանցումներով: Հատկանշական է, որ Տ.Կոմիտաս վարդապետը Սր. Պատարագի իր բազմաձայնության համար մեղեդիները քաղել է հենց այստեղից:

Ձեզ ենք ներկայացնում Տ.Կոմիտաս վարդապետի բազմաձայն «Պատարագ»-ից (Կոմիտաս – Երկերի ժողովածու, հատոր 7, «Պատարագ», Երևան, 1997թ.) մի քանի հատված՝ «Ընտրեալդ յԱստուծոյ», «Այսօր տօն է», «Գովեա Երուսաղեմ գՏէր», «Սուրբ, սուրբ», «Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ», «Աստուած մեր», «Լցար ի բարութեանց Քոց, Տէր», «Գոհանամք», «Եղիցի անուն Տեան օրհնեալ»: «Ամեն: Հայր սուրբ» երգը ներկայացրել ենք 1907թ. Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետի հոգեհանգստի պատարագի համար նախապատրաստված տարբերակով (Կոմիտաս – Երկերի ժողովածու, հատոր 8, «Հոգևոր ստեղծագործություններ», Երևան, 1998թ.):

Հաջորդիվ Ձեզ ենք ներկայացնում նշված երգերի բանաստեղծական տեքստերը՝ հայերեն և անգլերեն:

The music of the armenian church

By Éric Aloian, Yerevan Holy Cross Choir

In the Eastern-Christian musical heritage, Armenian church music, considered one of the oldest, has an exceptional place. It is one of the three branches of Armenian monodic music. Its rise is dated to the 1st century. The oldest written examples that we have are dated to the 4th-5th centuries, when the Armenian Alphabet was created by St. Mesrop Mashtots, which gave a start to the written tradition of Armenian hymnography. Its development continued throughout most of the Middle Ages – up to the 14th-15th centuries, with no significant changes afterwards. The invention of Armenian notation (also known as Limonjian notation), which came to replace the Khazes, was a notable creation and kickstarted the new era of written Armenian hymnography.

Ktsurd is one of the oldest genres of Armenian Church music (from Armenian “կցել” to attach), a short song with a simple melodic structure, mostly consisting of three verses. It was meant to be linked to verses from the

Bible, thus making the biblical quotes more understandable to the newly-Christianised nation. Those *ktsurds* were the prototypes of another, well-known genre – *sharakan*. In this programme, two Repentance *sharakans* from this era are included, which are attributed to St. Mesrop Mashtots. We tried to present those *sharakans* as close as possible to the original monodic way of performance, using organ points. The other *sharakan*, “Help Come to Us, Almighty Lord” [Arm. “Յօզնութիւն սեղ ժամանես”], is also devoted to the topic of penance. We present to you an arrangement of this *sharakan* for a male choir by the founder of Armenian classical music Rev. Fr. Komitas.

The majority of this programme consists of the arrangements of the Divine Liturgy, the centrepiece of the Armenian church's rituals. It summarizes Christ's whole earthly life and the ideology of the biblical Last Supper. The Armenian Divine Liturgy, like all the other genres of Armenian church music, was created

in Armenian, staying as close as possible to the Armenian nation's linguistic and melodic mindset, bringing a certain, ethnic sound. The musical component of the Armenian Liturgy developed greatly over time, with other genres of Armenian church music being added, such as *tagh*, *gandz*, *meghedi* and etc. The current structure of the Divine Liturgy (the monodic version) has reached us thanks to the two publications of the Divine Liturgy by N. Tashjian (1874, 1878, Vagharshapat). Rev. Fr. Komitas took the melodies for his arrangement of the Divine Liturgy from those two publications.

We present to you several pieces from the latter (Komitas, *The Complete Works*, Volume 7, "Liturgy", Yerevan, 1997) – "Chosen of God", "Christmas Processional", "Praise the Lord, O Jerusalem", "Holy, Holy", "Praised be Lord. Christ is Sacrificed", "Our God", "We Have Been Filled with Thy Goodness", "We Give Thanks to Thee", "Blessed Be the Lord's Name". The song "Amen. Holy is the Father" is presented to you from the

Liturgy prepared for Mkrtych I Khrimyan Catholicos's funeral in 1907 (Komitas, *The Complete Works*, Volume 8, Spiritual Music, Yerevan, 1998).

Finally, we were particularly cautious regarding the translations of the sung texts : "Abundant is Your Compassion" is taken from "De Profundis – Armenian Sacred Music, Anahit Papayan, Lusine Ghazaryan, Hover Chamber Choir. Vem Recordings, 2005 CD, Translations by Thomas Samuelian", "I Kneel Before Thee" was translated by Artsvi Bakhchinyan, "Help Come to Us, Almighty Lord" was taken from "The Way. Armenian Sacred Music. Hover Chamber Choir of Armenia. Vem Recordings, 2005 CD, p.13", "Christmas Processional" was translated by Eric Aloian, all the other texts from the Divine Liturgy were taken from "Divine Liturgy of the Armenian Apostolic Orthodox Church. Translated by Tiran Abp. Nersoyan, Revised Fifth Edition, London, 1984".



*L'Asie, issue d'un plafond de la Résidence Würzburg, "Appolon et les Continents", Giovanni Battista Tiepolo, 1752.
On y reconnaît Mesrop Machtots, l'inventeur de l'alphabet arménien.*



Narek Kazazyan

Narek Kazazyan

Qanun

Narek Kazazyan se forme au qanun et au piano dans sa ville natale de Vanadzor en Arménie, où il obtient ses diplômes musicaux avec honneurs dans ces deux disciplines. Dès son jeune âge, il se fait remarquer par son talent et sa virtuosité et est invité à monter sur les scènes des plus prestigieux festivals.

Ambassadeur de la musique arménienne, Narek Kazazyan représente son pays en 2012 au concours Eurovision pour les jeunes talents, où il remporte la troisième

place. Il se produit régulièrement avec d'autres musiciens arméniens, ce qui lui a permis de faire rayonner la culture de son pays aux États-Unis, Russie, Suisse, Angleterre, France, Grèce, Croatie, Israël, Autriche, Monaco, Jordanie, parmi d'autres.

Invité régulier de Vladimir Spivakov comme soliste avec les Moscow Victuosi et le Moscow Chamber Orchestra, il crée notamment pour son instrument de nombreuses œuvres contemporaines.

Նարեկ Կազազյան Քանոն

Նարեկ Կազազյանը քանոն և դաշնամուր նվագել է սովորել Հայաստանում՝ իր ծննդավայր քաղաք Վանաձորում, որտեղ էլ ստացել է իր երաժշտական դիպլոմները գերազանցությամբ՝ այս երկու գործիքներին տիրապետելու համար: Դեռ երիտասարդ հասակից, Նարեկը աչքի է ընկել իր տաղանդով և վիրտուոզությամբ և հրավիրվել է հանդես գալու ամենահեղինակավոր փառատոնների բեմերում:

Հայ երաժշտության դեսպանը՝ Նարեկ Կազազյանը, 2012 թվականին ներկայացնում է իր երկիրը «Եվրատեսիլ» երիտասարդ տաղանդների մրցույթին, որտեղ գրավում է երրորդ տեղը: Նա կանոնավոր կերպով

հանդես է գալիս այլ հայ երաժիշտների հետ, ինչը նրան թույլ է տվել տարածել իր երկրի մշակույթը Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, Շվեյցարիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Խորվաթիայում, Իսրայելում, Ավստրիայում, Մոնակոյում, Հորդանանում և այլուր:

Լինելով Վլադիմիր Սպիվակովի մշտական հյուրը՝ հատկապես որպես մենակատար «Մոսկովյան վիրտուոզների» և Մոսկվայի կամերային նվագախմբի հետ, նա մասնավորապես իր գործիքի համար ստեղծում է բազմաթիվ ժամանակակից գործեր:

Narek Kazazyan

Qanun

Narek Kazazyan trained in qanun and piano in his home town of Vanadzor in Armenia, where he earned his musical degrees with honours in both disciplines. He stood out from a very young age for his talent and virtuosity and was invited to perform at the most prestigious festivals.

As an ambassador of Armenian music, Kazazyan represented his country in 2012 at the Eurovision Young Musicians competition, where he won third place. He frequently performs with other

Armenian musicians, which has allowed him to showcase his country's culture in the United States, Russia, Switzerland, the UK, France, Greece, Croatia, Israel, Austria, Monaco and Jordan, among others.

He is a regular guest soloist for Vladimir Spivakov with the Moscow Virtuosi and Moscow Chamber Orchestra, and has composed a host of contemporary pieces for his instrument.



Astrig Siranossian

Astrig Siranossian

Violoncelle

Premier Prix et plusieurs fois Prix Spécial du concours international K. Penderecki, Astrig Siranossian se produit en soliste avec de grands orchestres. Invitée régulièrement par Daniel Barenboim, ses partenaires sur scène ne sont pas moins que Simon Rattle, Martha Argerich, Yo-Yo Ma, Kirill Gernstein, Elena Bashkirova, Emmanuel Pahud...

Elle se produit fréquemment sur les plus grandes scènes: Philharmonie de Paris, Carnegie Hall à New-York, Musikverein de Vienne, Walt Disney Hall à Los Angeles, KKL Luzerne, Casino de Bâle, Théâtre des Champs Élysée, Philharmonie de Berlin, Flagey Bruxelles, Théâtre Colon Buenos Aires, Kennedy Center Washington...

Régulièrement invitée sur les chaînes de télévision (TF1, France 2, France 5, CultureBox TV, BR Kultur..), ses enregistrements sont salués unanimement par la presse.

En mai 2022, Astrig fait ses débuts au Gewandhaus de Leipzig avec le *Concerto*

n°2 en Mi mineur de Popper. En octobre 2022 est paru son album *Duo-Solo*, rencontre entre mélodies et danses populaires et répertoire savant faisant dialoguer le violoncelle et la voix.

En 2021, elle grave avec son partenaire de scène Nabil Shehata, le premier concerto de C. Saint-Saëns pour le label Alpha Classics.

Pour ce même label, est publié en 2020 l'album *Dear Mademoiselle*, un hommage à Nadia Boulanger avec les pianistes avec Nathanaël Gouin et Daniel Barenboim qui reçoit les hommages de la presse internationale.

En 2018, son enregistrement réunissant les concertos de K. Penderecki et A. Khachaturian remportait notamment 5 diapasons, 5 étoiles Classica, Clef du mois ResMusica... Le précédent disque comportant des œuvres de Gabriel Fauré, Francis Poulenc et Komitas avait reçu le prix Musica.

Depuis 2016, elle prend la direction artistique des «Musicades», festival de sa ville natale, Romans sur Isère qui met en miroir la musique avec les arts, mais aussi la gastronomie. Elle crée en 2019 la mission «Spidak/Sevane» qui vient en aide aux enfants au Liban et en Arménie à travers la musique.

Astrig Siranossian est née dans une famille de musiciens. Admise cinq ans plus tard au C.N.R. de Lyon, elle poursuit ses études

au C.N.S.M. de Lyon, obtenant à dix-huit ans son diplôme d'études supérieures avec les félicitations du jury. C'est en Suisse, au Conservatoire supérieur de Bâle, qu'elle achève sa formation dans la classe d'Ivan Monighetti, réussissant avec les plus hautes distinctions son master concert et son master soliste.

Elle joue un violoncelle de Francesco Ruggieri de 1676, généreusement prêté par la Fondation Boubo Music.

Աստղիկ Սիրանոսյան Թավջութակ

Մ. Պենդերեցկի միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր և բազմաթիվ անգամներ հատուկ մրցանակի արժանացած Աստղիկ Սիրանոսյանը հանդես է գալիս որպես մենակատար մեծ նվագախմբերի հետ: Պարբերաբար հրավիրված Դանիել Բարենբոյմի կողմից՝ նրա բեմի գործընկերներն են ոչ պակաս հայտնի Մայնոն Ռատլը, Մարթա Արգերիխը, Յո-Յո Ման, Կիրիլ Գերնշտեյնը, Ելենա Բաշկիրովան, Էմանուել Պահուդը...

Նա պարբերաբար ելույթ է ունենում ամենամեծ բեմերում՝ Փարիզի Ֆիլհարմոնիայում, Նյու Յորքի Քարնեգի սրահում, Վիեննայի Ֆիլհարմոնիայում, Լոս Անջելեսի Ուոլթ Դիսնեյի սրահում, Լյուցեռնի մշակույթի և համերգների կենտրոնում, Բազելի Գրանդ-կազինայում, «Ելիսեյան դաշտեր» թատրոնում, Բեռլինի Ֆիլհարմոնիայում, Բրյուսելի Flagey-ում, Բուենոս Այրեսի Կոլոն թատրոնում, Վաշինգտոնի Քենեդի կենտրոնում:

Պարբերաբար, հրավիրվում է հեռուստաալիքներով (TF1, France 2, France 5, CultureBox TV, BR Kultur..), նրա ձայնագրություններն արժանանում են մամուլի միաձայն գնահատականին:

2022 թվականի մայիսին, Աստղիկը իր դեբյուտը կատարեց Լայպցիգի «Գեվանդհաուս»-ում՝ Պուպերի Մի մինոր թիվ 2 կոնցերտով: 2022 թվականի հոկտեմբերին, լույս կտեսնի նրա Դուո-Սոլո ալբոմը՝ հանդիպում մեղեդիների և ժողովրդական պարերի և նշակված երգացանկի միջև, որը երկխոսության մեջ է բերում թավջութակին և ձայնին:

2021 թվականին, նա իր բեմական գործընկեր Նաբիլ Շեհաթայի հետ ձայնագրեց Կ. Սեն-Մանսի առաջին Կոնցերտոն «Alpha Classics» լաբելի համար: Այս նույն լաբելի համար 2020 թվականին լույս է տեսել «Dear Mademoiselle» ալբոմը՝ հարգանքի տուրք Նադիա Բուլանժեին, դաշնակահարների, Նաթանաել Գուինի և Դանիել Բարենբոյմի հետ, ինչը արժանանում է միջազգային մամուլի բարձր գնահատականին:

2018 թվականին, Կ. Պենդերեցկու և Ա. Խաչատրյանի կոնցերտոները միավորող ձայնագրության շնորհիվ ստացավ 5

դիապազոն, 5 «Classica» աստղ և «Clef du mois ResMusica» մրցանակները ... Գաբրիել Ֆորեի, Ֆրանսիս Պուլենկի և Կոմիտասի գործերը պարունակող նախորդ սկավառակը «Musica» մրցանակի արժանացավ:

2016 թվականից, ստանձնել է «Musicades» փառատոնի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը իր հայրենի քաղաքում՝ Ռոման սյուր Իզերում, որը ներդաշնակորեն երաժշտությունը կապում է արվեստին, բայց նաև՝ խոհարարական արվեստին:

2019 թվականին, նա ստեղծեց «Սպիտակ/Սևան» առաքելությունը, որն օգնում է երեխաներին Լիբանանում և Հայաստանում երաժշտության միջոցով:

Աստղիկ Սիրանոսյանը ծնվել է երաժիշտների ընտանիքում: Հինգ տարի անց ընդունվելով Լիոնի ազգային կոնսերվատորիա՝ նա շարունակում է իր ուսումը Լիոնի երաժշտության բարձրագույն ազգային կոնսերվատորիայում՝ տասնութ տարեկանում ստանալով իր բարձրագույն կրթության դիպլոմը՝ ժյուրիի շնորհավորանքներով:

Հենց Շվեյցարիայում՝ Բազելի բարձրագույն կոնսերվատորիայում, նա ավարտել իր

վերապատրաստումը Իվան Մոնիգեաիի դասարանում, որտեղ ստացել է մագիստրոսի գերազանցության երկու դիպլոմ (համերգային կատարող և սոլիստ) ամենաբարձր

պարգևներով: Նա նվագում է 1676 թվականի հազվագյուտ Ֆրանչեսկո Ռուջերի թավջութակ, որը նրան մեծահոգաբար տրամադրել է Boubo Music Fund-ը:

Astrig Siranossian

Cello

Astrig Siranossian performs as a soloist with leading orchestras and has won a First Prize and several Special Prizes at the K. Penderecki International Cello Competition. She is a regular guest of Daniel Barenboim, and her onstage partners have included no less than Simon Rattle, Martha Argerich, Yo-Yo Ma, Kirill Gernstein, Elena Bashkirova, Emmanuel Pahud.

She frequently performs on the most prestigious stages, such as the Philharmonie de Paris, Carnegie Hall in New York, Musikverein in Vienna, Walt Disney Hall in Los Angeles, KKL Luzerne, Grand Casino Basel, Théâtre des Champs

Élysée, Berlin Philharmonic, Flagey in Brussels, Teatro Colón in Buenos Aires, the Kennedy Center in Washington and more.

She is regularly invited to perform on television channels (TF1, France 2, France 5, CultureBox, BR Kultur, etc.) and her recordings are met with unanimous acclaim in the press.

In May 2022, Astrig made her début at the Gewandhaus in Leipzig with Popper's Concerto no. 2 in E minor. October 2022 saw the release of her album Duo-Solo, which fuses Armenian folk melodies and dances with a skilful repertoire that brings her cello and voice into dialogue.

In 2021, along with her stage partner Nabil Shehata, she recorded the first concerto by Camille Saint-Saëns for the label Alpha Classics.

In 2020, she released the album “Dear Mademoiselle” with the same label, a tribute to Nadia Boulanger with the pianists Nathanaël Gouin and Daniel Barenboim, to acclaim from the international press.

In 2018, her recording featuring concertos by Krzysztof Penderecki and Aram Ilyich Khachaturian won 5 Diapason d'Ors, 5 Classica stars, the ResMusica “Key of the month”, and more. Her previous record, featuring works by Gabriel Fauré, Francis Poulenc and Komitas, won the Musica prize.

Since 2016, she has been Artistic Director of “Musicades”, a festival held in her home town of Romans-sur-Isère, which

brings music together with the arts and gastronomy. In 2019 she launched the “Spidak/Sevane” project, which supports children in Lebanon and Armenia through music.

Astrig Siranossian was born into a family of musicians. Having been accepted to the Lyon Conservatory of Music (C.N.R.) at the age of five, she continued her studies at the city's National High Conservatory of Music (C.N.S.M.), receiving her postgraduate degree with distinction. She completed her training in Switzerland, at the Basel Academy of Music, in the class of Ivan Monighetti, where she combined her two Master's in concert and solo performance with the highest distinction.

She plays a 1676 cello by Francesco Ruggieri, which was generously loaned to her by the Foundation Boubo-Music.



Église de la Sainte Croix d'Erevan

Chœur de l'Église de la Sainte Croix d'Erevan Shahe Keshishian, chef de chœur

Le chœur d'hommes de l'église Sainte-Croix du diocèse pontifical arménien (Arabkir, Erevan, Arménie) est jeune: il a été fondé au printemps 2018, lorsque l'église a ouvert ses portes à la population. C'est l'idée de chanter la «Divine Liturgie» de Komitas, écrite pour un chœur d'hommes, qui a motivé la mise en place d'un chœur entièrement masculin. Le directeur artistique et chef du chœur, Shahe Keshishian, est diplômé des trois départements du Conservatoire d'État Komitas d'Erevan – chant académique (lyrique), direction de chœur et direction d'opéra-orchestre symphonique. Dans sa ville natale d'Alep (ville du nord de la Syrie), il a dirigé le chœur Alexandre Spendiarian de l'UGAB, a été directeur de

l'école de musique Aram Khatchatourian de l'UGAB et a officié en tant que professeur de solfège et de formation vocale. Il a également dirigé le chœur de l'église Saint-Grégoire-l'Illuminateur du diocèse arménien de Beroea (Alep, Syrie) et a été soliste à l'opéra de Damas.

Il a fondé et dirigé une multitude de groupes musicaux: le chœur Noravank, l'ensemble Zangakner (carillons à main), le chœur de femmes Ovsanna, le chœur des diacres de la Mère-Siège de Saint-Etchmiadzin, et le chœur de l'église Sainte-Croix d'Arabkir à Erevan. Il a enseigné dans bon nombre d'écoles et d'instituts de musique et s'est produit dans divers pays européens: Allemagne, France, Pays-Bas, Belgique, Italie, etc.

Երևանի Սուրբ Խաչ եկեղեցու երգչախումբ Խմբավար՝ Շահե Քեշիշեան

Արարատյան Հայրապետական թեմի Արաբկիրի Սբ.Խաչ եկեղեցու (Երևան, Հայաստան) արական երգչախումբը երիտասարդ է, այն ստեղծվել է 2018-ի գարնանը: Արական կազմ հավաքելու նպատակը եկեղեցում Տ.Կոմիտաս վարդապետի բազմաձայն «Պատարագի» կատարումն էր, որ հենց արական կազմի համար է նախատեսված: Խմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Շահե Քեշիշեանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան երեք մասնագիտությամբ՝ «Դասական (օպերային) մեներգեցողություն», «Խմբավարություն», «Միմֆոնիկ և օպերային դիրիժորություն»: Իր ծննդավայր Հալեպում (Սիրիայի հյուսիսային քաղաք) ղեկավարել է ՀԲԸՄ Սպենդիարյանի անվան երգչախումբը, աշխատել է ՀԲԸՄ Ա.Խաչատրյանի անվան երաժշտական

դպրոցում՝ որպես տնօրեն և սոլֆեջոյի ու ձայնամարզության ուսուցիչ: Ղեկավարել է Բերիո Հայոց թեմի Հալեպի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը:

Հանդես է եկել նայրաքաղաք Դամասկոսի օպերային թատրոնում՝ որպես մեներգիչ:

